29. ՍԵՎ ԷԶԱՆ ՏԵՐ

Մարդ մի կէղնի, կելնի ճամբախ կէրթա։ Ռաստ գիգա ձորումի, ճամբախ չէղնի, էդ մարդ հ'ընցնի։ Մեծ քար մի կէղնի հ'առեջ։ Էդ մարդ շատ կղըլըպի չկեռնա հ'ընցնի։ Էրկու հոգի լե գիգան։ Կէղնին իրեք կմեկնին, էդ քար կգլորին ու կհ'ընցնին կէրթան։

Շատ ու քիչ կէրթան, կհանպտին կնկա մի ու մարգում. էդ մարդու հետ նախիր մի շուն կէղնի։

Ճամբորդներ կնկաց կհարցուն, կըսեն.—Էդ մարդ քու ի՞նչն է։

Կնիկ կըսե.—Իմ մարդն է. կտանե իդա շներ Հալապ կծախե, կբերե ապրինք։

Ճամբորդներ օր կնկա խոսք կլսին, կտեսնան օր էրիկ ճամբու դրեց, ինք տառցավ ետ։

Կըսին.—Իդա կնկա տակ ֆել մի կա,— ու կհ'ընկնին կնկա ետև։ Գիգան կտեսնան օր, կնիկ էկավ, մտավ ուր տուն։ Ուրանք լե հ'ետևեն գողտուկ էկան մտան ներս։

Էկան մտան ներս, տեսան օր կնիկ չորս հինգ սիրող առեր է ուր կուշտ ու բոլոր, սիրողութեն կէնե, կուտին ու կխմին, կթողին կէրթան։ Բան մի չըսին։

Քենիմ օր կհ'ընցնի, էդ իրեք լե կէրթան կկանին ճամբու վրեն, էն ճամբուն, օր մարդ գնաց։

Կիչքին տեսնան օր մարգն էկավ, սև եզ մի հ'առեջ ու դարտակ բեռ մը լե թալուկ վրեն։

Կըսին էդ մարդուն թե.—Քու կնիկ սիրողութեն կէնե, քզիկ մախսուս խարեր ճամբեր է Հալապ, օր սարպասթ բերե ուր մարդիկն ու տանե։—Կըսին,—չըս ավդընա, կուզիս արի բան մի էնինք,

առնինք քզիկ էրթանք, քու բումբարաք աչքով տես,—կըսին,—արի մտի մըշ թեռան, էրթանք քու տուն։

Կբերեն էդ մարդ, մտուն մըշ թեռան ու կքշին դեմ կէրթան էդ մարդու տուն։

Կէրթան, կհասնին տուն, կմտնին ներս, կիջուն ուրանց բեռ, մարդ լե մեջ, կդնին մեկդին ու բարև կիտան կէրթան նստին։

Կէրթան նստին, կնկա սիրողներ լե հոդ կէղնին. նա՛ դիշեր կպաղցուն, նա՛ ցերեկ, կբաշլին ուտել խմել։ Մարդ լե մըշ թեռան անկաճ կէնե։

Գլուխ ուրանց օր կշոդնա, կհ՝ելնին բռնեն պար ու կխաղան։ Դորով պար ու խաղ կըսին ու կխաղան։

Խաղ ըսելու դոր դիգա էղան տիրոջ. էղան տեր կըսե.

Սև էղան վրայի բեռ՝
Փետ վերու արի վեր,
Ձեռք բռնողն է քու յար[1]։

Մարդն կհ՝ելնի թեռան մեջեն, կքաշե դոբալն ու գիգա, ա՛ռ հա քզիկ յար, ա՛ռ հա քզիկ կնիկ, մեկ-մեկ կիտա կնկա սիրողներուն կշրջե գետին, փետ մը լե կնկա գլխուն, էն լե սիրողներու կշտի հետ։ Ձորս լե կսպանե։

Նոր գիգա, կնստի, ու կուտե կխմե։

Կըսե.—Ախպըրտանք, դուք ընծիկ մեծ ախպեր, ես ձզիկ պըզտիկ ախպեր։

Կնստին մեկտեղ ու իրարու հետ կապրին։

---

1 Խաղը ասվում է թուրքերեն. տե՛ս ծանոթագրությունների մեջ (Ս. Կ.)։